



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 սեպտեմբերի 2011 թվականի N 1436 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի
N 108-Ն ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 108-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «10,000,000.3» թիվը փոխարինել «19,914,000.3» թվով.

2) որոշման 1-ին կետի՝

ա. 1-ին ենթակետում «666,000.0» թիվը փոխարինել «1,334,000.0» թվով,

բ. 2-րդ ենթակետում «1,305,000.0» թիվը փոխարինել «2,610,000.0» թվով,

գ. 3-րդ ենթակետում «1,330,000.0» թիվը փոխարինել «2,560,000.0» թվով,

դ. 4-րդ ենթակետում «1,135,000.0» թիվը փոխարինել «2,270,000.0» թվով,

ե. 5-րդ ենթակետում «1,314,000.3» թիվը փոխարինել «2,640,000.3» թվով,

- գ. 6-րդ ենթակետում «1,318,000.0» թիվը փոխարինել «2,636,000.0» թվով
- է. 7-րդ ենթակետում «1,320,000.0» թիվը փոխարինել «2,640,000.0» թվով,
- ը. 8-րդ ենթակետում «720,000.0» թիվը փոխարինել «1,440,000.0» թվով,
- թ. 9-րդ ենթակետում «260,000.0» թիվը փոխարինել «520,000.0» թվով,
- ժ. 10-րդ ենթակետում «632,000.0» թիվը փոխարինել «1,264,000.0» թվով.

3) որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 և 10 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 10 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 11 և 12 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշման N 7 հավելվածի 5.1-ին կետով նախատեսված փոխհատուցման տրամադրման և միջոցների բաշխման վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՅԱՆ

2011 թ. հոկտեմբերի 13
Երևան